

LIFE – «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում գրադավածության խթանման միջոցով» ծրագրի

ՏԵՂԵԿԱԳԻՐ

#14- Հունիս 2015



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ



Save the Children

LIFE ծրագիրը (2012-2016) իրականացնում է «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ:

Ծրագրի գործընկերներն են «Ակտիվա» միջազգային հիմնադրամը, «Ունիսոն», «Էյջ-Դի-Փի հիմնադրամ» և «Լիարժեք կյանք» ՀԿ-ները:

Ծրագիրը սերտորեն համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Զբաղվածության պետական գործակալության և գրադավածության կենտրոնների, հաշմանդամություն ունեցող անձանց և ՀԿ-ների, մարզային իշխանությունների և տեղական ինքնակառավարման մարմինների, ծառայություններ մատուցողների, միջին մասնագիտական կրթական հաստատությունների և գործատուների հետ:

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ ԿԱՐԴԱՑԵՔ՝

- *LIFE ԾՐԱԳԻՐԸ ԸՆԴՀԱՅՆՈՒՄ Է ԻՐ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ*
- *ԱՄՆ ԴԵՄՊԱՆ ՌԻԶԱՐԴ ՄԻԼՍԻ ԱՅՑԸ «ԼԵՆՏԵՔՍ» ՄՊԸ*
- *ՍՏԵՂԾՎԵԼ Է ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՑԱՆՑ*
- *«ԾՆՈՂ-ԵՐԵԽԱ» ԽՄԲԵՐ՝ Ի ՆՊԱՍՏ ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԱՊԱԳԱ ՁԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ*
- *ՆԵՐԱՌԱԿԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ՄԿՈՒ ՈԼՈՐՏԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ*
- *ՏԵՍԱԽՅԻԿԻ ՎԱՐՊԵՏԸ. Գառնիկ Կարապետյանի պատմությունը*



LIFE ԾՐԱԳԻՐԸ ԸՆԴՀԱՅՆՈՒՄ Է ԻՐ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2012 թ-ի հունվարից «Մեյվ դը չիլդրենը», իր գործընկերներ «Ակտիվա» միջազգային հիմնադրամի, «Ունիսոն» ՀԿ-ի, «Էյջ-Դի-Փի» հիմնադրամի և «Լիարժեք կյանք» ՀԿ-ի հետ համատեղ և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ֆինանսավորմամբ իրականացնում է «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» (LIFE) ծրագիրը, որի նպատակն է խթանել աշխատունակ տարիքի հաշմանդամություն ունեցող անձանց (ՀՈԻԱ) մասնագիտական ուսուցումն ու աշխատանքի տեղավորման հնարավորությունները՝ նպաստելով նրանց կենսական խնդիրների լուծմանն ու հասարակության մեջ ինտեգրմանը: 2012-2014թթ ծրագիրը իրականացվում էր Երևանում և Արարատի, Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի մարզերում:

2014 թ. դեկտեմբերին ԱՄՆ ՄԶԳ-ն ընդառաջելով «Մեյվ դը չիլդրեն»-ի ծրագրի շարունակության առաջարկին տրամադրեց լրացուցիչ գումարներ ծրագրի փորձն ու *ՀՈԻԱ զբաղվածության ապահովման մոդելը* տարածելու նպատակով: LIFE ծրագրի երկրորդ փուլը իրականացվելու է 2015-2016թթ. և նախատեսում է աշխատանքներ ինչպես առաջին փուլի թիրախ վայրերում, այնպես էլ մյուս՝ Արագածոտնի, Արմավիրի, Կոտայքի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերում:

LIFE ծրագրի երկրորդ փուլում նախատեսվում է.

- **Շարժական զբաղվածության կենտրոնի ստեղծում**, ինչը հնարավորություն կտա մատուցել զբաղվածության ապահովման ծառայություններ հեռավոր վայրերից և տեղաշարժման/տրանսպորտային խնդիրներ ունեցող ՀՈԻԱ-ներին,
- Արագածոտնի, Արմավիրի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզերի զբաղվածության տարածքային կենտրոններում և **Շարժական զբաղվածության կենտրոն** ավտոմեքենայում **ՄՄՍՍ սարքավորման տեղադրում**,
- Արագածոտնի, Արմավիրի, Կոտայքի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերի զբաղվածության կենտրոնների աշխատակիցների **ՀՈԻԱ-ների հետ աշխատելու կարողությունների զարգացում**,
- **Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների աշխատակազմի իրազեկության բարձրացում** ՀՈԻԱ հետ աշխատանքի սկզբունքների վերաբերյալ,
- ՀՈԻԱ-գործատու կապը ապահովելու համար Երևանում և մարզերում գործող **«Զբաղվածության ակումբների» ակտիվացում**,
- Արագածոտնի, Արմավիրի, Կոտայքի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերի Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական/**ՄԿՈԻ հաստատությունների դասախոսական կազմի վերապատրաստում** ներառական միջավայրի ստեղծման նպատակով,

- Արագածոտնի, Արմավիրի, Կոտայքի, Սյունիքի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերի հատուկ և գիշերօթիկ դպրոցներում «Երեխա-ծնողական» խմբերի ստեղծում և հաշմանդամություն ունեցող երիտասարդների **մասնագիտական կողմնորոշման աշխատանքների կազմակերպում**,
- ՀՀ բոլոր մարզերում և Երևանում Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական/ՄԿՈՒ հաստատություններում աշխատանք ուսանողների հետ **«Հավասարը-հավասարին» սկզբունքով**,
- ՀՀ բոլոր մարզերում և Երևանում **«Կյանքի հմտությունների և աշխատանքի պատրաստվածության» դասընթացների անցկացում** շահառուների համար,
- ՀՀ բոլոր մարզերում և Երևանում **աշխատանք գործատուների հետ** նոր/ինտեգրված աշխատատեղերի ստեղծման/ հարմարեցման նպատակով,
- ՀՀ բոլոր մարզերում և Երևանում ՀՈՒԱ զբաղվածության հիմնախնդրի և ՀՈՒԱ զբաղվածությանն աջակցող պետական ծրագրերի վերաբերյալ **իրազեկության բարձրացման աշխատանքներ**՝ քարոզարշավների, հեռուստա-ռադիո-հաղորդումների, տպագրությունների և ՀՈՒԱ-գործատու հանդիպումների և մամուլի ասուլիսների կազմակերպման միջոցով,
- ՀՀ բոլոր մարզերում և Երևանում գործող Զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչների համար **ՀՈՒԱ հիմնախնդիրների լուսաբանման թեմաներով դասընթացներ**,
- LIFE ծրագրի շրջանակներում ստեղծված **«սոցիալական ձեռնարկությունների» փորձի գնահատում, վավերականացում և տարածում**։
- ՀՀ բոլոր մարզերում ՀՀ բոլոր մարզերում և Երևանում գործող **Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների (ՀՈՒԱԿ) ցանցի ստեղծում**։



*30-ամյա Անդրանիկն
աշխատանքային
պրակտիկա անցավ և
աշխատանքի տեղավորվեց
«Մեքյուրիթի դրիմ» ՄՊԸ-
ում:
Նա ասում է, որ
աշխատանքն իր համար
ապահովում է ոչ միայն
եկամուտ,
այլև ջերմ ու ընկերական
միջավայր:*

ԱՄՆ ԴԵՍՊԱՆ ՌԻԶԱՐԴ ՄԻԼՄԻ ԱՅՑԸ «ԼԵՆՏԵՔՍ» ՄՊԸ

Ս.թ. մայիսի 21-ին ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլսը այցելեց LIFE ծրագրի գործընկեր Գյումրու «Լենտեքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, որը հանդիսանում է գուլպաների և գուգագուլպաների խոշորագույն արտադրողներից մեկը Հայաստանում: Ձեռնարկությունը հայտնի է ինչպես տեղական, այնպես էլ միջազգային շուկաներում: Ձեռնարկության թողարկած լիովին հագեցած արտադրատեսականին բավարարում է բոլոր տարիքային պահանջները:

LIFE ծրագրի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ՄՊԸ-ում վերապատրաստման դասընթացներ են իրականացվել հաշմանդամություն ունեցող 14 կանանց համար, ովքեր այնուհետև գտել են իրենց զբաղվածությունը նույն ձեռնարկությունում: Նույնիսկ դրամաշնորհային ծրագրի ավարտից հետո ձեռնարկությունը շարունակում է խթանել և նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց կարողությունների զարգացմանը: Ներկայումս հաշմանդամություն ունեցող տասը անձինք ներգրավված են կտորի արտադրության մասնագիտական դասընթացներում:



«Լենտեքս» ձեռնարկությունում դեսպան Միլսը գովեստով արտահայտվեց տնօրեն Սևակ Գումցյանի ու LIFE ծրագրի մասին՝ Գյումրում տնտեսության զարգացման հարցում ունեցած ներդրման ու Գյումրու բոլոր բնակիչների կարողությունները՝ անկախ տարբերություններից ու սահմանափակումներից, ճանաչելու համար:

«Լենտեքս» ընկերությունում ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ,

Դեսպան Միլսը մասնավորապես անդրադարձավ ԱՄՆ ՄԶԳ-ի գործընկեր «Մեյվ դը չիլդրենին», որն իր LIFE ծրագրի շրջանակներում հասարակական կազմակերպությունների, գործարար համայնքի և տեղական ինքնակառավարման մարմինների հետ սերտ համագործակցության արդյունքում հիմնել կամ ընդլայնել է 17 սոցիալական ձեռնարկություններ, որտեղ իրենց զբաղվածությունն են գտել հաշմանդամություն ունեցող ավելի քան 200 անձինք: Ձեռնարկությունների գործունեության ոլորտները բազմազան են և ընդգրկում են կաշվե իրերի արտադրությունը, տեքստիլ արդյունաբերությունը, լուսանկարների ու եռաչափ տպագրությունը, արևային ջրատաքացուցիչների տեղադրումը և այլն: Միջոցառման նկարները կարող եք դիտել հետևյալ կայքում. <https://www.facebook.com/media/set/?set=a.1013723958645487.1073741841.214609181890306&type=1>

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՑԱՆՑ

Ի պատասխան LIFE ծրագրի կողմից ստեղծված սոցիալական ձեռնարկությունների ներկայացուցիչների կողմից հնչեցված պահանջի, «Մեյվ դը չիլդրենի» LIFE թիմը նախաձեռնեց քննարկում սոցիալական ձեռնարկությունների և գործատուների ցանցի ստեղծման վերաբերյալ: Ցանցը հիմնականում նպատակ կունենա փորձի և տեղեկատվության փոխանակումն ու համատեղել Ցանցի մասնակից ձեռնարկությունների ջանքերը Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովման գործում միասնական գործունեություն իրականացնելու համար: Ցանցին անդամակցելու և նախաձեռնության վերաբերյալ իրենց կարծիքն արտահայտելու համար հրավիրվել էին LIFE ծրագրի կողմից ստեղծված կամ ընդլայնված բոլոր սոցիալական ձեռնարկությունների ներկայացուցիչները: Քննարկմանը նաև մասնակցում էր ԱՄՆ ՄԶԳ ներկայացուցիչը, որը «Մեյվ դը չիլդրենի» և LIFE ծրագրի տնօրենների հետ միասին ողջունելով ներկաներին ևս մեկ անգամ ընդգծեց Ցանցի կարևորությունը Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց համար զբաղվածության խթանման գործում:

Ողջունելով գաղափարը՝ մասնակիցները պատրաստակամություն հայտնեցին անդամակցել ցանցին և վեր հանեցին որոշակի ուղղություններ, որոնք առանցքային պետք է դառնան ցանցի հետագա գործունեության ընթացքում: Մասնավորապես նշվեց, որ ցանցը առաջատար դեր պիտի ունենա տեղեկատվության տարածման, խնդիրների լուծման ուղղությամբ միասնական և նորարարական մոտեցումների կիրառման, ցանցի անդամ հանդիսացող գործընկերների ապրանքների մարկետինգի և իրացման խթանման, կարողությունների և ռեսուրսների զարգացման և այլ հարցերում:

Բոլոր մասնակիցները լիահույս էին, որ ցանցը կծառայի իր նպատակին՝ կխթանի և կաջակցի սոցիալական ձեռնարկատիրության գաղափարի տարածմանը՝ որպես Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խնդրի լուծմանն ուղղված նորարարական մոտեցում:

Նույն օրը ցանցի անդամ գործընկերները մասնակցեցին մարկետինգի և բրենդավորման վերաբերյալ դասընթացին, որը վարում էր Նիդեռլանդներից հրավիրված փորձագետ Ռոնալդ վան Հովեն: Փորձագետը մասնակիցներին մեծապես օգնեց ստեղծել շուկայավարման իրատեսական պլաններ և վերանայել բրենդավորումը, առաքելությունն ու լոգոտիպերը:

Հարկ է նշել, որ արդեն առաջին իսկ հանդիպման ընթացքում մասնակիցներին հնարավորություն էր ընձեռնվել օգտվել առիթից և ներկայացնել իրենց ձեռնարկությունների արտադրանքը: Այսպես, ներկաներին հաճելիորեն զարմացրեցին Գորիսի «ԳՈՒՄ» ՄՊԸ-ի կողմից կարված և նրանց տրամադրված կաշվե գունեղ թղթապանակներն ու Սևանի «Երկնային մանանա» հրուշակարանի անուշահամ խմորեղենը:



«ՇՆՈՂ-ԵՐԵՒԱ» ԽՄԲԵՐ՝ Ի ՆՊԱՍՏ ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԱՊԱԳԱ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մասնագիտական կրթության իրավունքների մասին իրազեկության բարձրացումը, այդ գործընթացում ընտանիքների ներգրավումն ու երեխաների կարողությունների և ցանկությունների գնահատումը եղել և մնում են LIFE ծրագրի գործունեության հենակետեր:

2015թ. ութ նոր «ծնող-երեխա» խմբեր են ստեղծվել Արմավիրի, Արագածոտնի և Վայոց ձորի մարզերում՝ ընդհանուր առմամբ ընդգրկելով հաշմանդամություն ունեցող 92 երիտասարդների և նրանց ծնողների: Դասընթացներին մասնակցել են նաև 50 ուսուցիչներ՝ այդ թվում ներառական կրթության համակարգողներ, հոգեբաններ, հատուկ կրթության ուսուցիչներ և սոցիալական աշխատողներ: Խմբերի ստեղծումը նպատակ ունի հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ծնողներին իրազեկել և տեղեկացնել մասնագիտական կրթության և զբաղվածության առկա հնարավորությունների, պետության կողմից հովանավորվող կրթական ծրագրերի և ծառայությունների մասին:

Մասնագիտության ընտրությունն ու կողմնորոշումը խմբերի մասնակիցների համար կատարվում է LIFE ծրագրի շրջանակներում «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնի» կողմից մշակված «Մասնագիտական կողմնորոշման համակարգված տեստի» միջոցով:

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԴԱՍՄՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՅ ՄԿՈՒ ՈԼՈՐՏԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

LIFE ծրագրի շրջանակներում «Մասնագիտական կրթական բարեփոխումներ» ՀԿ- ն 2015թ. ապրիլ-նոյեմբեր ամսիներին իրականացնելու է մի ծրագիր, որն ուղղված է ՄԿՈՒ հաստատությունների ուսուցիչներին և վարչական անձնակազմի առանձնահատուկ կրթական պայմանների կարիք և/կամ հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու վերաբերյալ կարողությունների զարգացմանը: Առայժմ կատարվել են հետևյալ աշխատանքները.

ա) 39 ՄԿՈՒ հաստատություններ ներկայացնող 226 ուսուցիչների, վարչական աշխատակիցների և արհեստավորների շրջանում կատարվել է կարիքների գնահատում՝ բացահայտելու նրանց գիտելիքներն ու ընկալումը հաշմանդամություն ունեցող անձանց համար ներառական ուսուցման մեթոդների վերաբերյալ:

բ) Փորձարկումից հետո լրամշակվել և բարեփոխվել է ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի կողմից հաստատված «*Ինչպես աշխատել հաշմանդամություն ունեցող ուսանողների հետ*» խորագրով ձեռնարկը, որն անդրադառնում է միջին մասնագիտական կրթական ոլորտում ներառական կրթության կազմակերպման հիմնական սկզբունքներին: Ի լրումն, նաև մշակվել են հավելյալ ձեռնարկներ և շնորհանդեսի նյութեր:

գ) Սյունիքի, Վայոց ձորի, Արմավիրի, Կոտայքի, Տավուշի և Երևանի 29 միջին մասնագիտական հաստատություններ ներկայացնող 96 ուսուցիչներ և վարչական աշխատակազմի ներկայացուցիչներ մասնակցել են հնգօրյա դասընթացների ծանոթանալով ընդունված տերմինաբանությանը, ներառական միջավայրի ստեղծմանն ու հաշմանդամություն ունեցող մրցունակ կադրերի պատրաստման առանձնահատկություններին:

ՏԵՍԱԽՑԻԿԻ ՎԱՐՊԵՏԸ

«Ունիսոն» հասարակական կազմակերպությունը 2 տարին մեկ անգամ անց է կացնում գեղեցկության մրցույթ հաշմանդամություն ունեցող կանանց շրջանում, և մասնակիցները շատ լավ գիտակցում են, որ առաջին փուլը (լուսանկարների ընտրություն) մեծապես կախված է նաև լուսանկարչի վարպետությունից: 2010թ.-ի գեղեցկուհիներից մեկի լուսանկարն իր գեղարվեստական ձևավորման ինքնատիպությամբ գրավեց առանձնահատուկ ուշադրություն: Նկարը առավելևս հետաքրքրեց, երբ տեղեկացանք, որ լուսանկարիչը հենաշարժողական խնդիր ունեցող երիտասարդ է: Կարելի է այդ լուսանկարը դիտարկել որպես պատանու հաջողության պատմության սկիզբ: Իսկապես, հենց Ժանետտա Հայրապետյանի լուսանկարից սկսվեց «Ունիսոնի» ծանոթությունը *Գառնիկ Կարապետյանի հետ*, ինչը հետագայում խթանեց երիտասարդի զբաղվածությունը: Ի դեպ, չբավարարվելով լուսանկարչի հմտությամբ, Գառնիկը ստացավ նաև բարձրագույն կրթություն, այս անգամ՝ օպերատորի մասնագիտությամբ: Այդպիսով, երբ LIFE ծրագրի շրջանակներում սոցիալական ձեռնարկության ստեղծման նախաձեռնությամբ հանդես եկած «Օրդֆիլմը» կինոյին առնչվող թափուր աշխատատեղերի մրցույթ հայտարարեց, «Ունիսոնն» անմիջապես ներկայացրեց Գառնիկի թեկնածությունը:

Յուրաքանչյուր մարդու համար երջանկության բաղկացուցիչ մասը հետաքրքիր, սիրված մասնագիտությամբ աշխատանքն է: Հետագայում, Գառնիկին մի քանի անգամ հանդիպելով Կոմիտաս Վարդապետի նորաբաց ինստիտուտ-թանգարանում՝ «Օրդֆիլմի» նկարահանումները կատարելու ժամանակ, համոզվեցի, որ նա ինքնահաստատվել է իր մասնագիտության մեջ: Ներկայումս Գառնիկն արդեն այնքան պահանջված մասնագետ է դարձել, որ համատեղում է «Օրդֆիլմի» աշխատանքը «Բարս մեդիա» կինոստուդիայի աշխատանքի հետ:



Ի դեպ, «Բարս մեդիան» նկարահանել էր հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության վերաբերյալ LIFE-ի շրջանակներում ստեղծված 2 տեսահոլովակ, ինչի արդյունքում խորապես ուսումնասիրել էր հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային ներուժը ներկայացնող նյութերը, վարվելակերպի կանոնները, տերմինաբանությունը, իսկ արդեն այսօր, Գառնիկի շնորհիվ հնարավորություն է ստացել գործնականում կիրառել իր տեսական գիտելիքները:

*Նյութը պատրաստել է
Մարիաննա Չալիկյանը*

LIFE ծրագրի մեկնարկից՝
2012թ. հունվարից մինչ օրս հաշմանդամություն ունեցող

434 անձ

տեղավորվել է աշխատանքի

Ի գիտություն հետազոտողների, հասարակական և մասնավոր սեկտորի. ՏԵՂԵԿԱԳԻՐԸ հնարավորություն է տալիս լուսաբանել հաշմանդամության ունեցող անձանձ ուղղված ծրագրերը/հետազոտությունները: Հետաքրքրվածության դեպքում կարող եք դիմել LIFE ծրագրին Armenia@savethechildren.org էլ. հասցեով:

LIFE ՏԵՂԵԿԱԳԻՐԸ պատրաստվում է ԱՄՆ ՄՁԳ Ֆինանսավորմամբ իրականացվող LIFE ծրագրի շրջանակներում: Տեղեկագրում արտահայտված տեսակետները հեղինակներինն են և կարող են չարտացոլել ԱՄՆ ՄՁԳ-ի կամ «Մեյվ դը չիլդրենի» տեսակետները:



Save the Children

«Մեյվ դը չիլդրենը» երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ամենամեծ կազմակերպություններից է աշխարհում: Այն ներառում է 29 ազգային կազմակերպություններ, որոնք գործում են ավելի քան 120 երկրներում:

«Մեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ»-ի հայաստանյան ներկայացուցչություն
Հայաստան, Երևան 0014, Ազատության պող. 27, 3-րդ հարկ
Հեռ.՝ (374-10) 20-10-14, 20-10-25, 20-10-29; Ֆաքս՝ (374-10) 20-12-29
Էլ. փոստ՝ Armenia@savethechildren.org
Վեբ կայք՝ www.savethechildren.net; www.life-disability.am



facebook



youtube